

ՏՆՈՐՈՒՆԻ

ՎԱՆԷ ՍԱՀԱԿԵԱՆ

(1944-1991)

Զ Դեկտ. 1991, Երկուշաբթի օր, Լիոնի մեջ (Ֆրանսա) մահացած է Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. Սահակեանի կրտսեր եղբայրը՝ Վահէմ, 47 տարեկան համեմատաբար երիտասարդ հասակին, ամիս մը տառապելէ ետք ամոռոք հիւանդութեամբ մը ճիրամներում մէջ:

Համգուցեալը ծնած է Երուսաղէմ եւ իր Սրբազան եղբօր մամն հասակ մետած Ս. Յակոբեանց Մայրավանքի հայաշումշ ու կրօնաբոյր մթմնութիւն մէջ: Աւարտելէ ետք ուսման իր ընթացքը մեկնած է Ֆրանսայի Լիոն քաղաքը: Ամուսնացած էր Վարդուհի Իմկիլեանի հետ ու կազմած ընտանեկան իր բոյմը ունենալով երկու զաւակներ, որ այսպէս ամօթամանակ կերպով կը կորսնցնէ իր հոգատարն ու հայրը: Ամ իր գործօն ու դրական մասնակցութիւնը բերած է իր բնակավայրի հայ համայնքի կրօնական ու մշակութային կեանքին, պատրաստակամ ծառայասիրութեամբ ոգիով: Ամ Վիլերման քաղաքի Հայ Մշակոյթի Տան Վարչութեան Փոխ-Նախագահը եղած է, եւ շատ գործունեայ եւ աշխոյժ անդամներն էին:

Յուդարկանութեամբ մախագահած է Լիոնի Առաջնորդ Գերշ. Տ. Նորվան Եպս. Զաքարեան եւ տեղւոյն քահանայից դասը բազմաթիւ ազգայիններու եւ համգուցեալին Սրբազան եղբօր ներկայութեամբ: Ամեմ. Ս. Պատրիարք հօր անունով ալ ծաղկեպսակ զետեղուած էր դազադին վրայ:

4 Յունուար, Ծաբաթ օր, Երուսաղէմ, հոգեհամգիստ կատարուեցաւ համգուցեալի հոգւոյն համար, Ս. Գլխադրի մատարման մէջ մատուցուած Ս. Պատարագի աւարտին:

ԳՐԻԳՈՐ ԲԱՇՃԵԱՆ

Սուրբ Աթոռոյս միաբաններէն Հոգ. Տ. Ժիրայր Ծ. Վրդ. Թաշնեան, որ մերկայիս կը ծառայէ Բարիգի Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ, Բարիգի Առաջնորդ եւ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Գեր. Տ. Գիւտ Արք. Նազգաշեանի հովանաւորութեամբ մերքեւ, Լոս Անճելըս իր հարազատներուն այցելութեամբ գմաց, մասնակցելու համար իր հօրը թաղման արարողութեամբ:

Հայր Սուրբին հայրը՝ Գրիգոր Թաշնեան, բնիկ Խարբերդցի, տարագրութեամբ "դառնութեամբ բաժակը ըմպած", իր աւելոյթի մէջ կը փակեր իր աչքերը, իր հարազատներուն վկայութեամբ՝ "հաւատքի եւ ջերմեռանդ բարեպաշտութեամբ կեանքը ապրելէ վերջ: Նախքան իր ամուսնութիւնը, ուխտաւորական կարաւաններու հետ այցելած էր Սուրբ Երկիրը": Յետագային, իր ընտանիքի անդամներուն եւս առիթ ընծայած է իր օրինակին հետեւելու:

Տիրամայր Ամահիտ Թաշնեան, ամուսնացեալ իր երեք աղջիկ եւ մէկ տղայ զաւակներով եւ թողնելով գործօն մասնակցութիւն կը բերեն ազգային եւ եկեղեցական կեանքին եւ գործունէութեան:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը թէ՛ Սահակեան եւ թէ Թաշնեան ընտանիքներուն գրաւոր յայտնեց իր եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ցաւակցութիւնները, մաղթելով որ Աստուած լուսաւորէ հոգիները մեր մնչեցեալներուն եւ Սուրբ Հոգւոյ միջնորդութիւն պարգեւէ ողջներուն: